ԹԻՒ 369 Ը· ՇՐՋԱՆ ԵՐԵՔՇԱԲԹԻ 1877 ՍԵՊՏԵՄԲԵՐ 6

ՀԱՅՐԵՆԻՔ

ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Ա Զ Դ

Դրամական անձկութեան պատճառաւ կը խնդրեմք թէ՛ Պօլսոյ և թէ՛ գաւառաց բաժանորդներէն որ բաժանորդագինին ժամանակին վճարել բարեհաճին։

ԱԶԳԱՅԻՆ

Գեր. Տ. փիլիպպոս եպիսկոպոս Յոռոսթեայ մէջ առաջնորդական ընտրութեան ձեռնարկելէ առաջ կրօն. և քաղ. ժողովոց ընտրութիւն կատարեր է, ինչպէս կը տրամադրէ օրէնքը։ Սակայն Յոռոսթեայէն կը հաւաստեն մեզ թէ այս ընտրութիւնը սահմանադրական մեծ սխալ մը ունենալով, անպատճառ բեկանման ենթակայ պիտի ըլլայ։

Երեսփոխանական ժողովոյ հրաւիրուելեն 1872 թուականէն առաջ մասնակի փոփոխութեամբ դադարեալ երեսփոխանք որք երեսփոխանութենէն ըստ օրինի դադրած ըլլալով, քուէի մասնակցելու իրաւունք չունին, քանի որ անոնց տեղ նորեր ընտրուած են։

Արդ այս սահմանադրական սխալն ուղղելու համար պէտք է ո՛չ միայն 1872 թուականէն առաջ մասնակի փոփոխութեամբ դադարեալ երեսփոխաններն իբր երեսփոխան չը ճանչել և նոցա տեղ ընտրուած երեսփոխանները իբր երեսփոխան ճանչել, այլ և 1872 թուականէն վերջը օրինաց՝ տրամադրած մասնակի փոփոխութիւններն ալ որ 2/5 մասը կը կազմէ, նախապէս կատարել և ըստ այնմ ընտրութեան ձեռնարկել։ Հետեւաբար օրինաց թերին չը լրացուցած կամ ապօրէն կերպիւ ընտրեալ կրօնական կամ քաղաքական ժողով օրինաւոր չեն կրնար համարուիլ սահմանադրական վարչութեանց առջև։

Ուստի այս կարեւոր կէտը Գեր. փիլիպպոս սրբազանի ուշադրութեանը ներկայացնելով, ընտրական սկզբանց մասին տեղի ունեցած սխալին բարձուիլը անհրաժեշտ կը համարինք։

Տրապիզոնէն՝

(Շար. պես Թիւ 257)

« Տրապիզոնցի Հայն լաւ կը սիրէ գինետունն քան գրքատուն (*). աւելի կը սիրէ նարտ, թուղթ, ևլն. խաղալով ղլուխը օրերով ուռեցնել, քան աղգային օգտակար գործերով զբաղիլ։ կըսպակիները միմեանց հետ խորհուրդ կընեն թէ « ո՛ր գինետունը լաւ գինի գտնուի »։ Հոս գինետուններն կրնան թուով բաղդատուիլ գրեթէ միւս կըրպակաց հետ որուն մանրամասնօրէն տեղեկութիւն այլ առթի կը թողում։ Մաս մի Հռովմէական Հայեր կան որ երբեմն երբեմն Հայու անցեալին, ներկային և ապագային վերայ դիտողութիւններ կընեն. մանաւանդ վենետիկ ուսում առնողները, որոնք հոս Ուրարատեան Ընկերութիւն կազմած են և քանի մ՛ալ Լուսաւորչական Հայեր իրենց հետ ունենալով՝ սրճարան մը բացած են ուր բերել կուտան քանի մը Հայերէն, Գաղղիարէն և Տաճկերէն լրագրեր։ Այս ալ տեղւոյս Հայոց ծարաւը յագեցնելու չէ կարող։ Հայը հոս պէտք ունի օրինաւոր Գրադարանի մը, ուր Հայ ուղեղը մշակելու համար պէտք է ունենայ ամեն տեսակ ընտիր գրքեր, հանդէսներ ու լրագիրներ, որպէս զի անդ ուսնի մշակել խոպանացեալ Հայ վայրերը որ փուշ ու տատասկ բուսած են։

« Քաղաքիս մէջ 1000 ի մօտ և չրջակայ գիւղից մէջ 1000 են աւելի Հայ ընտանիք գտնուելով՝ պէտք եր մեծ խնամք տարուեր, ամեն տեղ դպրոցներ բանալու ճգնել. փոխանակ եկեղեցւոյ և կալուածոց ստակները այս ինչ այն ինչ անձի կոկորդը անցնելու դպրոցի և վարժապետի դլուխը անցնելն լաւ չէ։ Պիւղերու մէջ 1500 են աւելի տղայք որոնք գրեթէ Հայերէն լեզուն բոլորովին թողուլով՝ Տաճկերէն կը խօսին, աւելի լաւ չէր լիներ զանոնք ի մի վայր հաւաքելով՝ Աղէ, Հայրենիք, Հայ-Պատմութիւն և Մարդկութիւն ուսուցանել. պիտի կարծէք թէ դժուար է նոցա մէջ ուսմունք մըտցընել, չեմ կարծեր թէ այնչափ դըժուար լինի որչափ որ խափ թուղթը. այլ միայն Հայ սիրտ, երբ ւիւղ կերթաս, հաւ և սեր վինուելու սր . . . խնդրէ, նա քո փողին չէ կարօտ, քո խօսքին. նա երբ համոզուի սիրելդպրոցը՝ ամեն միջոցի պիտի դիմէ իւրսիրելի զաւակը կրթելու. նա կրնայ դիւրութեամբ դասատարակել իւր զաւակը Հայց երբ անհոգ լինիս քո արեանը, ո՛ եղբօրը փըրկութեան անտարբեր դտնուիլ, այնու կը մնայ ազգի ազգի աւլորդապաշտութեան մէջ անկանիլ, օրըստ օրէ անմեղ

(*) Փիչ բացատրութեամբ։

զոհեր տալ տգիտութեան։ Յատանային տուաձէն հրաշագործ քահանայ մ՛ալ ունինք, որուն կախարդական հրաշալի ղոհերը ամեն օր ի գահոյս Աւետնակաչին կը բարձրանան. այս քահանային մասին, որ բոլոր քաղաքացիքս և գիւղացիքը զարմացուցած է, երկար պիտի խօսիմ, երբ իւր գիւղին վերայ գրեմ. զարմանալին այս է որ ի վարձատրութիւն իւր կախարդութեան, պատիւն աւելցաւ...։

« Քաղաքիս մէջ լուիկ մնչիկ աննչան մի անձ կը չրջի. սա եօթանասնամեայ ծերունին՝ Հայաստանեայց եկեղեցւոյն հաւատարմաբար ծառայած է. իր առած թերի ուսման մէջ եւս քալ գիտէր գինքն անձնուէր հովիւ կարգել իւր հօտին. 15 տարի կայ որ արգիլուեցաւ սմա սրբազան խորհուրդ կատարելու մի՛ չնչին յանցանքի համար. ի վերջոյ հրաման սըրուեցաւ որ վերստին սրբազան պաշտօնին ձեռք զարնէ. բայց նա յօժար կամօք չուզեց իր քահանայական պաշտօնը կատարել. այլ միայն քրտանցը արդիւնք եղող գիւղօրէից մէջ երբեմն՝ առ սէր իւր հոգեւոր որդւոց։ Սա վեհանձն քահանան իւր անխոնջ աշխատութեամբը Տրապիզոնի քանի մը գիւղօրէից լուսաւորիչը կրնայ համարուիլ. իրեն թիկունք առնելով ճարտարապետ կարապետ ամիրան որ բազում նկրտած է չատ մը գիւղեր քրիստոնէութիւնը և ազգութիւնը կանգուն պահելու. սա աշխատութեամբ, ազգասէր ամիրան դրոց օգնութեամբ, ասոնց այս աշխատութիւնը չլինէր, կարծեմ այսօր Սիւրմէնէ, Կալաֆկա և Շանա գիւղից մէջ հազիւ ուրեք պիտի տեսնուէր քրիստոնէութեան նշոյլ։

« Տ. կարապետ Տաւլաշեան

« Փորձ հանդիսին Ա. Գ. թուոց մէջ վայլող կարապետ ազգասէր արքեպիսկոպոսին քով սակաւ ինչ ուսած է ի կարին. դարձած է իւր հայրենիք, Յակոբոս արքեպիսկոպոսէն քահանայ ձեռնադրուած է ի Գարա-Հիսար 1836 թուին։

« Այսօր երախտապէտ գիւղացիք պատկառանօք կյիշեն զՏ. կարապետ. նա եւս ընդ ժողովրդեան պատկառանօք կյիշէ զմեծաւազատիւ և զազգասէր ամիրան որ չատ անդամ անտուկներով լեցուն, չատ մը գրքեր ուղարկած է գիւղացի աղքատ տղայոց ձրի բաշխելու. տե՛ս ընթերցող, Հայ մը և ճշմարիտ Հայ մը որ կը խոստանայ Տ. կարապետին « հոգ մի ա-

ներ, այդ գիւղօրէից համար ո՛րչափ դիրք պէտք ըլլայ, ես պատրաստ եմ. միայն թէ դու հոգ տար այդ թշնուառ ազգայնոց և ամեն պատարագիդ մէջ հոգւոյս փրկութեան համար աղօթէ»։ Ահա աղնուահոգի և ազգասէր անձ մը՝ որուն պէսներու շատ կարօտ են խաւարի մէջ մնացող 15 ի չափ շրջակայ գիւղերը. վասն զի այժմ աւելի աղքատ ըլլալով առաջինէն ալ աւելի կարօտութիւն ունին ազգասէր սրտերու։

«Տ. կարապետ իւր յոգնամեայ հասակին մէջ ներկայ առաջնորդն իւրեան մեկենաս ունենալով կը յորդորէ զգիւղացիս որ դպրոց կազմեն. երբեմն կայցելէ գիւղերը, կը խրատէ որ դպրոց առաքեն զմանկտիս. մի քանի օր առաջ իրեն պատահեցայ, նա ուրախ էր և կաղօթէր Պօլսեցի մի ազգասէր անձի արեւշատութեան համար, որ 100 ֆրիստոնէական ղրկած էր աղքատ գիւղացի տղոց բաշխելու։

«Հայ մարդ, կը ղարմանա՞ս արդեօք երբ կարդաս որ այսպիսի անձ մը հոս մաս մը Հայերէ կանարգուի մանաւանդ ամբողջ քահանայական դասէն. իբրև թէ նա «իր որովայնը պարարելու համար աստ անդ կերթեւեկէ և կաչխատի»։ Երանի՛ թէ դուք ալ ո՛վ քահանայք Տրապիզոնի՝ այս կամ այն ինչ հարուստին տունը կամ կրպակը նստած մինչեւ երեկոյ շաղակրատութիւն ընելու, որոնէիք անմշակ Հայեր, մշակէիք նոցա սրտեր, ուսուցանէիք նոցա թէ ի՞նչ է քրիստոնէութիւն և ի՞նչ ազգութիւն. խրատէիք ձեր ժողովուրդը սիրել Հայաստանեայց Ս. Եկեղեցին և սիրել գիրեարս։

«Գիտեմ, Հայ քահանայ մարդերը, կը ցաւիք երբ մտերնիդ ձգեմ Համաշէնի 18,000 տունը և Գարա–տէրէի 8000 տունը, որոնք այլ և այլ բռնութեանց չը դիմանալով՝ ցաճկական կրօնը ընդունած են առանց ձգելու Հայերէն լեզուն։ 1600 թուականէն մինչև ցայսօր մեծ տարբերութիւն ըլլալը չե՞ս գիտեր, չես ցաւիր երբ մտքիդ առնես դումարես այս լուսաւորեալ դարուն (*) 30 էն աւելի Հայեր որ քո ծոցէդ հեռացուցած ես օտար կրօնի որս տալով. քահանա՛յք, հաւերը իւրեանց վառեկները բաղէին չտալու համար ի՞նչ կանեն. քահանա՛յք, հովիւք իւրեանց խաչինք ի՞նչպէս կպահպանեն. քահանա՛յք, թագուհին փեթակը ի՞նչպէս կկարգադրէ. քահանա՛յք, բժիշկք ի՞նչպէս վէրքերը կբուժեն և ի՞նչպէս պիտի բուժէք ձեզ յանձնուած ժողովուրդը. այն ձեր տանը դարակին վերայ գտնուած Շարականը չէք հասկանար, Նարեկն ալ բնաւ ուրիշ գրքի կամ լրագրի երես չէք տեսած, Հայ սրտերը չէք որոնած, Հայ վէրքերը չէք զննած. ահա այսպիսի բժշկի մը դեղը մահ է. ձեր պարտիքը չէք կատարեր, երկու անհաշտները անկարող էք իհաշտութիւն ածել. վասն զի չունիք խօսք, վասն զի Ս. Գիրք ուսած չէք.....։

Շարունակելի

(*) Տասը տարուան միջոցին։

Ա– ԸՆԴՐԱԿ ԹԱՂ. ԽՈՐՀՐԴՈՅ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԳՈՒՄԱՇՔՈՎ

Թաղիս պատուարժան Թաղ. խորհուրդը խմբովին հրաժարած, և Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմանէ նոր ընտրութեան հրաման եկած ըլլալով, ըստ օրինի ընտրողական ժողովով կազմուած և ընտրական գործողութեան ձեռնարկուած է։

Թաղիս Ընտրող. ժողովը՝ կը փութայ ներկայիս իւր թաղեցի հրաւիրել զընտրողս՝ Թաղիս Թաղ. խորհրդոյ տասներկու անդամոց ընտրութեան համար կատարուելիք գաղտնի քուէարկութեան մասնակցելու Ազդ. Սահմանադրութեան 55 67 և 68րդ յօդուածոց տրամադրութեան համեմատ։

Ընտրող. ժողովը ընտրողաց դիւրութեան համար հետեւեալ եռապատիկ թուով ընտրելեաց ցանկ մ'ալ կը ներկայացնէ, սակայն ընտրողք ազատ են սոյն ցանկէն դուրս անձանց ալ քուէ տալ։

Ընտրողք՝ պարտին 12 անձինք ընտրելով, անոնց անուններըք՝ մականունովին ու արհեստովը քուէթղթի մը մէջ գրել և յառաջիկայ հինգշաբթի առաւօտուն՝ որ է Սեպտ. 8, անձամբ բերել Ս. Խաչի կողմը և իրենց ձեռօքը քուէտուփը ձգել 'ի ներկայութեան Ընտր. ժողովոյ. իսկ եթէ բանաւոր պատճառաւ չը կրնան գալ. նամակաւ մը փողոցնին և տան թիւերնին նշանակելով և ստորագրութիւննին դնելով՝ և քուէթղթերնին ներփակեալ, վրան «Ա. Նախագահ Ընտր. ժողովոյ Մայր եկեղեցւոյ» գրել և ծանօթ անձի մը հետ խրկել։

Քուէները պիտի ընդունուին առաւօտեան ժամը 1էն մինչեւ 4, և յետոյ անմիջապէս քուէհամարի գործողութիւն պիտի կատարուի։

Աւելորդ չեմք համարիր ծանուցանել, թէ ժամը 4էն ետքը եկած քուէները, նոյնպէս ծրար ծրար բերուած նամակները ընդունելի կը համարուին։

3 Սեպտ. 1877 Մնամ աղօթարար
Նախագահ Ընտրող. Մայր
եկեղեցւոյ
Սարգիս Քահանայ
Մայր Եկեղեցւոյ

ՅԱՆՑ ԸՆՏՐԵԼԵԱՑ

Ալիքսան	էֆ.	Անդրանիկեան
Աւետիս	»	Սարգիսեան
Գաբրիէլ	»	Դրճակեան
Գաբրիէլ	»	Նշանեան
Գաբրիէլ	»	Եփազարեան
Գէորգ	»	Գլիգորեան
Գէորգ	»	Զարդարեան
Դանիէլ	»	Արզումանեան
Եղիա	»	Շապիկեան
Կարապետ	»	Զիմրիւքճեան
Կարապետ	»	Գաբրիէլեան
Կարապետ	»	Շէքարեան
Կարապետ	»	Տէր Մանուկեան
Համբարձում	»	Զէքիճեան
Ղազարոս	»	Զատէեան
Մանուէլ	»	Թուշատուրեան
Մարկոս	»	Աբճաճեան
Մարկոս	»	Մազլումեան
Մաքսուտ	»	Ստգիսեան
Միքայէլ	»	Ըղնապապեան
Միքայէլ	»	Մրտիրոսեան
Մկրտիչ	»	Ակրէսեան
Մկրտիչ	»	Միքեան
Յովհաննէս	»	Նուրեան
Յարութիւն	»	Մազլումեան
Նիկողոս	»	Շնորհքեան
Նշան	»	Նիկողոսեան
Պաղտասար	»	Յակոբեան
Պետրոս	»	Քարամաթոսեան
Պօղոս	»	Ճիլաճեան
Պօղոս	»	Յակոբեան
Սարգիս	»	Զըրաճեան
Սարգիս	»	Քալաճեան
Սիմոն	»	Թիւթիւնճեան
Սիմոն	»	Ցօհաննէսեան
Ստեփան	»	Աբիսողոմեան

ԿԱՂԱՔԱԿԱՆ

Սուլէյման փաշայէն սեպտ. 2 թուով եկած հեռագիր մը Շիփքայի մէջ Ռուսաց վրայ անդադար թնդանօթ արձակուիլը ծանուցանելով, կուռւ մը կը պատմէ որ 10 ժամ տեւեր է։ Այս կռւոյն մէջ օսմանեան զօրաց կողմանէ տասը վիրաւոր, իսկ թշնամւոյն կողմանէ մեծ կորուստ տեղի ունեցեր է։

Սուլէյման փաշա սեպտ. 1 թուով Քէկարլի լերան ստորոտը Սատէթ–Քէրայի փաշային կամաւոր զօրօք 500 ռուսաց հետ ըրած մէկ կռիւն ալ կը ծանուցանէ, որուն մէջ թշնամին 50 մեռեալ և 100 վիրաւոր ունեցեր է։

Մէհմէտ Ալի փաշայէն սեպտ. 1 թուով եկած հեռագիր մ'ալ Պէյքըր փաշայի Բօլաճայի մէջ 3000 խազախներու հետ ըրած կռիւը կը ծանուցանէ, որուն մէջ Պէյքըր փաշա քաջութեամբ կռուելով թշնամին լերան դիմացի կողմը փախուցեր է։ Բայց հոն ալ չորս վաշտ զօրք դումարուած ըլլալով, Պէյքըր փաշա իր գնդովը վրանին յարձակեր և թշնամին ետ մղեր է անոր 100 հոգիին կորուստ պատճառելով։

Սոյն հեռագիրը կըսէ թէ ռուսական 11րդ զօրաբաժինը Թրնօվան Թողլով, Պիէլա եկեր է Նիքօլա մեծ դքքսին 12դ և 13դ զօրաբաժիններուն հետ միանալու համար որոնք Քարա–Հասանլըյի և Բըչլօվայի մէջ լաւ պարտութիւն կրեցին։

Մէհմէտ Ալի փաշայէն սեպտ. 3 թուով եկած հեռագիր մ'ալ կը պատմէ թէ Ֆերիդ Ասաֆ փաշա 12 վաշտով Գըչլօվայէն մեկներ և մի և նոյն օրը Սինան գիւղաքաղաքը գրաւեր է։ Նոյնպէս սեպտ. 2ին ռուս. 32 գունդով և 64 թնդանօթով Ասաֆ փաշայի վրայ յարձակելով, Սապիթ փաշա Գըչլօվայէն դուրս ելեր և վեց վաշտով Ասաֆ փաշայի օգնութեան հասեր է. որով և սաստիկ կռիւ մը ըլլալով, Ռուսք մինչեւ Պանիքա–Լօմ հալածուեր են բազմաթիւ կորուստ կրելով։

Բլէշնայի փոխ–կառավարիչէն սեպտ. 2 թուով եկած հեռագիր մ'ալ տեղեկութիւն կուտայ թէ չաբաթ, կիրակի, երկուշաբթի, երեքշաբթի և չորեքշաբթի հինգ օր շարունակ ռուս. Օսմ. դիրքերուն վրայ յարձակելով, նախապէս զանոնք դրաւեր են. սակայն չորեքշաբթի կէս օրէն վերջը Օսմ. զօրքերը այնպիսի կատաղի յարձակում մ'ըներ են, «Ալլահ ալլահ» պօռալով, որ Ռուսք չկրնալով դիմադրել թողեր են մարտկոցները և խառնակութեամբ ետ քաշուեր են հաղարաւոր մեռեալ թողլով, նոյնպէս երեք թնդանօթ, բազմաթիւ զէնք և

թնդանօթաձգութեան երեք մնոուկ Օսմ. զօրաց ձեռքը յանձնելով։

Սոյն հեռագիրը կըսէ թէ հինգշաբթի և ուրբաթ օրերն ալ Ռուսք քաղաքին և հիւանդանոցաց վրայ թնդանօթ արձակեր են, որոց պատճառաւ չորս Պուլղար մեռեր են։

Օսմ. զօրաց ձեռքը մնացած 20 դերիները հաստատեր են թէ այս պատերազմին մէջ ռուսք 15000 մեռեալ և 30000 վիրաւոր ունեցեր են։

Ձերիտէի Ասքէրիէ կըսէ թէ Օսման փաշային եկած հեռագիր մը սոյն դէպքը կը հաստատէ։

Բաց այս կռիւներէն, Օսման-բազարի շրջակայները, Շիբքայի և Օսիքուվայի մէջ մանր կռիւներ եղած են, որոց մէջ ռուսք մեծ կորդ կրեր են.

Թըրնովայի կառավարիչը կը հեռագրէ թէ 50 ի չափ ռուսք Հանի Սալիհի լարած դարանն իյնալով, կէսը դաշտին վրայ մնացեր են որոց մէջ կը գտնուին երկու սպայ և մնացեալք փախեր են 25 հրացան, 17 վերարկու, 14 վրան և զէն թողլով։

Թըրնովայէն եկած հեռագիրներ տեղեկութիւն կուտան թէ Ռուսք եկեղի-Մահալլէն պարպեր և դէպի Եուսուֆ-խան և Գատի ուղղեր են ընթացքնին։ Պուլղարները ռուսաց ետևէն կերթան եղեր, այնպէս որ Գօչլովայի կողմը Պուլղարի հետք բնաւ մնացած չէ։

վարնայի կառավարիչն ալ տեղեկութիւն կուտայ թէ Բազկրատէն Րուսճուկ թշնամի մը բնաւ չը մնալով, երկաթուղին նորէն սկսեր է բանիլ մինչև Զէրնավոտա։

Լա Թիւրքի կըսէ թէ Բլեւնայի առջև ռուսք բոլորովին աւրուեր են, զոր կը կը հաստատէ նաև Օսման փաշայի հեռագիրը, ինչպէս վարը կը տեսնուի։ Նոյնպէս Օսման փաշա 8 հազար հոգի ալ գերի առեր է։ Շիբքայի մէջ կայսերական զօրքերը յաղողութեամբ պահուեր են. ի ռուսաց ձեռքը մնացած վերջին ապաստանարանը, Սթէֆի-Նիքօլաի ամրութիւնքըն ալ Օսմ. զօրաց ձեռքըն անցեր են։

— Լա Թիւրքի կըսէ թէ Օրխանիէի ճամբուն վրայ գտնուած Րուպինք գիւղը տրուած պատերազմին մէջ Րումանիոյ բանակը բոլորովին պարտուեր և ցիրուցան եղեր է. կայսերական զօրքը 9 Թընդանօթ գրաւեր է և թէ Պիէլայի մէջ մեծ պատերազմ մը չատ մօտ է։

— Լէվանթ Հէրալտի վարնայի թղթակիցը կը գրէ թէ ռուսք պատերազմի դաշտին մէջ 2000 հրացան թողլով. Լօմի անդիի եղերքը վռնտուեր են։

— Ռուսճուխէն չորս ժամ անդին Բիրկօսի մէջ երկու կողմանէ քանի մը կռիւներ տեղի ունեցած ըլլալը Ռուսճուխի հրամանատրը կը ծանուցանէ։

—Կօրնիւ-Սթուտէն սեպտ 5։ «12 ժամ պատերազմէ վերջը Լոֆճայի առումը իմերինսքի իշխանին տեղեկագրէն հասկըցուած է։ Տաճիկները ամենայն քաջութեամբ կռուելէ և քանի մը անգամ յարձակում ընելէ վերջը ետ քաշուելու պարտաւորեցան։ Սքօպէլէֆ զօրավարը ձիաւոր զօրօք տաճիկները փախուցեր է. օսմանցիք չափազանց կորուստ կրեցին»։

Ա.յս լուրը ռուսական աղբիւրէ ելած է։

Լոնտրա սեպտ. 6։ Պուքրէշէն Սթանթարտ լրագրին գրուածին նայելով, Լօֆճայի պատերազմը տաճիկներէն սկսեր է։ Ռուսք Օսմ. զօրքերը ինն անգամ ետ մղեր են։ Տէյլի Թելկրաֆի առած տեղեկութեանը նայելով, ռուսք Լօֆչան առնելնուն պէս, ամնուն հին Բլեւնայի վրայ յարձակեր են։

Լոնտրա սեպտ. 4. Օսման բաշայի Բէլիշաթի մէջ Ռուսաց վրայ ըրած յարձակումը այս պատերազմին է'ն արիւնուշտ կռիւներէն մէկն ըլլալը Տէյլի Նիւս կը ծանուցանէ։ 20,000 ռուսերէն 500ը ջարդուեր և տաճկներէն ալ երկու հազար հոգի պակասած ըլլալը կը յայտնէ։

Պուքրէշ սեպտ. 6։ Անցեալ գիշեր տաճիկները մակոյկներով Գալաֆաթի եղերքը Զաբէրչինի անուն տեղ մը թէև մօտենալ ուզեր են, սակայն Րումանիոյ թնդանօթները արգելք եղեր են։

Ա.յս առաւօտ ռուսք Սլօպօղիա անուն տեղէն Ռուսճուխը թէև ռմբակոծել սկսեր են, սակայն տաճիկներն ալ պատասխանելով, թնդանօթի պատերազմը տակաւին կը տեւէ։

Պէլկրատ սեպտ. 5։ Ամբողջ Սերվիոյ պաշարման վիճակի մէջ դրուիլը որոշուեցաւ։ Սալիհ Զէքի փաշային Տրինա դեմին շուրջը 30000 զօրօք կեդրոնանալը կը խօսուի հոս։ Սերվիոյ բանակին հրամանատարութիւնը Միլան իշխանին յանձնուած ըլլալը ստոյգ է»։

Պէլկրատ սեպտ. 4։ Բացի Աւստրիոյ և Ռուսիոյ հիւպատոսներէն բոլոր հիւպատոսները Սերվիոյ պատերազմական պատրաստութեանը դէմ ազդու բողոքներ ըրին, ծանուցանելով որ եթէ Սերվիա պատերազմին մասնակցի, Եւրոպա դժուարին դիրքի մը մէջ պիտի մտնէ և այնուհետեւ Տաճկաստան աղատ պիտի ըլլայ Սերվիոյ հետ ուզածին պէս վարուելու։

«Միւս կողմանէ կորչաքօֆ իշխանը ընդ հուպ պատերազմի դաշտը իջնելու համար անդադար յորդոր կը կարդայ Սերվիոյ. բայց երեսխոնք պատերազմի դէմ ըլլալով, նոյնին հրատարակութիւնը չեն ընդունիր։ Այսպէս Սերվիա անորոշ վիճակի մէջ է. ամէն օր պաշտօնէից ժողով կը գումարի։

Պէրլին սեպտ. 4։ Հոս այնպէս կը կարծուի թէ Մէհմէտ Ալի փաշայի Պիէլայի վրայ ըրած յարձակումը կեղծ է. նըպատակը Թրնովայի վրայ քալել է»։

— Վիէննայէն սեպտ. 15 Թուով եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ռուսք Բլեւնայէն վերջապէս ետ քաշուելու ստիպուեր են և Զարը երկու անգամ մըրեր է։

—Եւրոպայէն եկած լրագիրները մինչեւ օգոստ. 30–31 ի կռիւները կը ծանուցանեն. անկէ անդին բան մը չկայ։

Արդէն այս կռիւներն ալ Ռուսաց պարտութեամբը վերջացած են, ինչպէս գիտեն ընթերցողք։

Սէմլին սեպտ. 4

«Սերվիական գործողութեանց բանակը որ պատերազմի կազմ և պատրաստ է, Լանտվէրի առաջին կարգի 60 վաշտէ և կանոնաւոր 26 վաշտէ կը բաղկանայ, ընդ ամէնը 67,000 հոգի։

«Աչնանային կրթութեանց պատրուակաւ այս բանակը դրօշակի ներքև կանչուեցաւ և չորս բանակատեղիի պիտի բաժնուի։

«Եթէ Րումայի Սերվիական մեծ միութինկը կառավարութենէն արգիլուած չէ, երէկ տեղի պիտի ունենար։

«Երէկ չէ առջի օր, 10,000 Սերվո-Խըրուաթ հարաւային Սլաւ գաւառներէն վազելով, Րումայի մէջ ժողվուած էին։

«Ռուսիայէն դրամի առաջին գումարը շոգենաւով Պէլկրատ եկաւ, և չորս կառքով կառավարութեան պաշտօնատեղին խրկուեցաւ։

«Էքաթէրինօսլավ ռուս ազնուականը 10000 րուպլի խրկեց Նիքիթա իշխանին ի նպաստ Գարատաղի վիրաւորաց։ Պ. Կավրիլօվիչ մեռնելով, 15000 տուքադ կը տակեր է հասարակաց կրթութեան պաշտօնատան»։

— Օրսօվայէն սեպտ. 3 Թուով եկած հեռագիր մը կըսէ թէ ռուսք Բլեւնայի ամբողջ գծին վրայ մինչև Լօմ դէպ ետև շարժում մը կընեն։ Օգոստ. 20էն ի վեր 20000 հիւանդ և վիրաւոր ունեցած են։ Րումանիոյ վրայ օսմ. զօրաց կողմանէ արշաւանքի մը կսպասուի, եթէ ռուսք վճռական յաղթութիւն մը չկարենան ձեռք բերել։

— Աթէնքի լրագիրները կը ծանուցանեն թէ 18,700 Շասբօ հրացան պարունակող 800 մնոուկ Գերմանիայէն Պիրէա հասեր է և թէ Թրիէստէն ալ յատուկ շոգենաւով պատերազմական մթերք կրսպասուի։

Հելլենական կառավարութիւնը, յոյն լրագրի մը գրածին նայելով, 20 հատ Քրուբի թնդանօթ, 7 միլիոն Շասբօ գիշեկ, երկու զրահաւոր նաւ, 40000 համազգեստ և 4000 վինչեսթըր հրացան ապսպրեր է մէկ ամիսէն յանձնուելու պայմանաւ։

—Ներկայ պարագայից կարեւորութեան պատճառաւ պատերազմական ժողովը այսուհետեւ գիշերները պիտի դումարի։ Նոյնպէս բանակակեդրոններու հետ չարունակ բանակցելու համար վեհ. Սուլթանին հրամանաւ Սպարապետի տեղապահը և Բ. Մահմուտ փաշա փոխոխակի Սպարապետի դուռը պիտի մնան գիշերները հարկ եղած առեն գործելու համար։ Հեռագրատան պաշտօնեայներն ալ ամբողջ գիշեր պիտի հսկեն զինուորական հեռագիրներ ընդունելու համար։

— Ապտիւլ-Բերիմ փաշա, Բէտիճ փաշա և միւս զօրապետները Լեմնոս հասեր են Սուրէյա շոգենաւով։

— Կիրակի օր Բերա Սէն-Լուի եկեղեցին հանդիսաւոր պատարագ մատուցուեցաւ Պ. Թիէրի հոգւոյն համար։

— Կառավարութիւնը Շքոտրայէն եանիա բազմաթիւ Գրուբի թնդանօթ փոխադրեր է։

— Փոնեայի գաւառին մէջ 1000 կամաւոր ևս գրուեր է։

— Մօխումէն Տաճկաստան գաղթող

Ապազայուց Թիւը մինչև սեպտ. 2. 34,0 00 հոգիի հասած է. ասոնցմէ 14,000ը Տրապիզոն, 8000ը Սամսոն, 1500ը Փլաթանա, 3000ը Կիրասոն, 3000ը Օրտու, 3000ը Րիզէ, Ֆօլ, Թրիբօլի և 1500ը Սինոպ խրկուեր են։

Պ. Թիէր մահուընէն քանի մը օր առաջ տնդղիացի բարեկամներէն մէկուն նամակ մը գրելով, Արեւելեան խնդրոյն վրայ սապէս կը խօսի.

«Ահա՛ Տաճիկք յայղուրեան մէջ են։ Եւրոպա ասոնց համար մեծ մտատանջութեան մէջ էր. զի արդարութիւնը և տիեզերական հաւասարակշռոյն ճշմարիտ շահը անոնց հետ էր։ Տաճկաց այսպէս բարձի թողի մնալուն վրայ շատ պիտի զղջան և ցաւին. զայս կըսեմ յանուն պատուոյ իրաւանց։ Մօտակայ համաձայնութիւն մը խաղաղութեան մասին փափաքելի է սակայն ես ատոր միջոցները տակաւին չեմ տեսներ. զի պարտեալ ռուսք յաղթող ռուսերէն աւելի պահանջող պիտի ըլլան։ Երկրորդ պատերազմ մը կը վախնամ. զի այս տարուան պատերազմը խաղաղութիւնը թագաւորեցնելու բաւական չեմ տեսներ»։

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ահաւասիկ Օսման փաշային սեպտ. 2 Թուով զարնուած և երէկ իրիկուն հրատարակուած հեռագրին օրինակը։

«Ինչպէս արդէն յայտնի է, Թշնամին շաբաթէ մը ի վեր ամէն կողմէ զմեզ պաշարած ըլլալով և դիշեր ցերեկ պատերազմի բռնուելով, յայղուեցանք թըշնամիին քաղութեամբ դիմադրել և երեք Թնդանօթ և քանի մը ձի, խել մը գործիք և մթերք գրաւելու, Թշնամիէն 7-8000 հոգի ջարդելով. պատերազմը տակաւին կը չարունակէ. մանրամասնութիւնը վերջէն կը հաղորդեմ»։

Օսման փաշային երէկ իրիկուն հասած հեռագիրը մ'ալ Շիբգայի կիրճին Ոէֆի-Նիքօլա ամրութեան առնուիլը կը ծանուցանէ. աւելցնելով թէ ծնացած դիրքերն ալ առնուելու վրայ են, և թէ պատերազմը տակաւին կը չարունակէ։

Ուրիշ հեռագիր մ'ալ Սիւլէյման փաշային եկած կը ծանուցանէ թէ խային Պօղազի բարձունքը գունդ մը զօրք խըրկուելով, Թշնամւոյն դիրքերը աչքէ անցընելու համար, Թնդանօթի պատերազմ մը տեղի ունեցեր և Թշնամիէն 100 հոգի, մէկ զօրապետ և քանի մը սպայ ջարդուեր են. խել մ'ալ ձի սպաննուեր է։

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ ԳԻՇԵՐՕԹԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ՅԱՐՄԱՇ

Օգոստոս ամսոյ հինգերորդ օրը վարժարանիս արձակուրդի ժամանակը լրացաւ, բայց աշակերտք հաղիւ մէկ երկուք վերադարձան, որուն պատճառ կերևի թէ երեւելիութեանց համար ճանապարհի կասկածները և ժամանակի ձախորդութեանց հետզհետէ ծանրանալը պիտի ըլլայ։

Կըյայտարարեմք թէ՝ Ս. Ղևոնդեանց վարժարանս բարեկարգեալ և հետևապէս արդիւնական վարժարան մ'ըլլալու համար, բացմանէն մինչև ցայսօր ամեն կարելի զոհողութիւն ըրած է վանքը, շահ միայն համարելով իրմն՝ ազգին ըստակաց դաստիարակութիւնը։ Սակայն ե. թէ ծնողաց մեծ մասն ո՛և է կասկածներով զաւակներն չպիտի ղրկեն, ինչպէս մինչև ցայսօր, տարակոյս չկայ թէ վարժարանը միայն ժառանգաւորաց համար բաց պիտի համարուի։

Թոշակաւորաց համար, յայտարարութեան թուականէն սկսեալ տակաւին 10 օր ալ կոպասեմք, և այս միջոցին կը հրաւիրեմք ծնողքները որ օր յառաջ փութան վանքին միաբաններէն արժ. Գէորգ վարդապետի հետ բանակցիլ՝ որ կը գտնուի Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին ամեն օր ժամը 5 էն մինչև 10։

Պէտք է դիտուին ծնողք որ երթևեկութեանց համար ճանապարհի վտանգները ապահովելու հոգ պիտի տարուի և քիչ թոշակաւորներով ալ վարժարանը բարեկարգ պահելու համար բնա՛ւ ծախք պիտի չ'ինայուի, միայն թէ աշակերտաց թիւը գոնէ 30 էն չ'պակսի։

Կ. Պօլսէն և այլ քաղաքներէ փոքր ինչ հեռաւորութիւնը թէև ոմանց համար անհաճոյ թուի, սակայն կերպ մը բարիք է ծնողաց աչքէն և ղբօսալից վայրերէ հեռի՝ անփոփ և անղբաղ մտօք միայն ուսման պարապելու կողմանէ։

Կարևոր ուսմանց տեսակներուն ամենը, և լեզուներէն միայն հայերէն, գաղղիերէն և տաճկերէն կ'աւանդուին։

Աշակերտաց կեանքն ու առողջութիւնը խնամով պահպանելու համար, վարժարանս իւր մէջ յատկապէս հնարաւոր բժիշկ կը պահէ վկայեալ և յաղողակ և բաւականաչափ դեղարան։

Աշակերտին տարեկան թոշակն է 32 լիրա օսմանեան, որոյ մէջ են երթևեկութեանց, թղթատարութեանց և սովորական ադանելեաց ծախքէն զատ՝ ուրիշ բոլոր ծախքերը։

1877 Օգոստ. 31 Խոչէ Եղիազար
Ի Ս. Կ. վանս Յարմաշ Հ. վանից Արմաշու

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՆԱԽՆԱԿԱՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
Ըստ վերադիտութեան Հայոց Պատրիարքարանի Ս. Էջմիածնայ
Ի ՊԷՏՍ ՆԱԽԱԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՈՒՑ
ԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ
ԿՐԹԱԿԱՆ
ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
Ըստ վերադիտութեան Հայոց Պատրիարքարանի Ս. Էջմիածնայ
Ի ՊԷՏՍ ԶԱՐԳԱՑԵԱԼ ԴԱՍՈՒՑ
ԱԶԳԱՑԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՑ
Բօլսէնայ
Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ ՊԷՅ
Առաջարկութեամբ եւ Վաւերացմամբ
ԱԶԳ. ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ
Տպագրեալ հրամանաւ
Տ. ՆԵՐՍԻՍԻ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻ Կ. ՊՕԼՍՈՑ

Մեր վարժարանաց թէ՛ նախակրթարանի և թէ՛ զարգացեալ դասուց աշակերտք մինչեւ հիմա չունէին այնպիսի քրիստոնէական մը որ կարող ըլլար նոցա մտքերը դոհացուցիչ կերպիւ լուսաւորել կրօնի վարդապետութեամբ՝ ու սըրտերնին կրթել բարոյականի վեհ սկզբունքովը։

Այս պակասը լեցընելու համար՝ Ազգային կեդր. վարչութեան կրօն. ժողովը խնդրած է Գեր. Տ. Խորէն Ս. Արքեպիսկոպոսէ Նար Պէյ՝ յարմարագոյն դասագրքեր յօրինել, որ բոլոր դպրոցաց մէջ և ամէն դասատուաց ձեռքը կրօնի և բարոյականի առաջնորդող գործիները լինին, աշակերտաց համար ալ հրահանգիչ լինելու ամեն հանգամանքներն ունենան։

Կրօնական ժողովոյն փափաքը լիովին կատարեցաւ։ Եւ, ինչպէս որ այս գործոց սկիզբը կը տեսնուի, Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայրն ու կրօն. ժողովոյ Բննիչ Յանձնախումբն իրենց գոհունակութիւնն յայտնելով՝ կը վկայեն միանգամայն թէ քաջուսումն Հեղինակի գործերն ամենեւիմբ համաձայն են վարդապետութեան և աւանդից Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ. նոյնպէս և տպագրութիւն նոցա օգտակար յոյժ ի վառս Հայաստան Եկեղեցեաց և յուսումն ուխտի մանկանց վարժարանաց Ազգիս։

Այս գովեստները բաւական երաշխաւորութիւն են թէ՛ Սրբազան Հեղինակին իրական արժանեաց և թէ՛ սոյն Դասագրոց խնամօք և ընտրելագոյն ոճով յօրինուած ըլլալուն, որոյ համար՝ իբր տէր-հրատարակիչ՝ չխնայեցինք ոչ ծախք և ոչ աշխատութիւն, որպէս զի այս գըրքերը յարմարաւոր պատկերօք և վայելուչ տպագրութեամբ ի լոյս ընծայուին։

Գալայոյս եմք որ այս Քրիստոնէականները Ազգին ընդունելութեանը պիտի արժանանան, մանաւանդ կրթականը, որ ո՛չ միայն Դպրոցաց՝ այլ ընդհանրութեան ևս կարի օգտակար պիտի լինի, քանզի ընտանեկան ընտիր հրահանգներ կը պարունակէ. որոց միջոցաւ միայն կըրնամք յուսալ՝ թէ օր մը մեր տուները նախնական դպրոցաց նմանելով՝ պիտի կարենան զուգընթաց քայլել վարժարանաց հետ և անոնց ընթացիցը նպաստել ըստ կարի։ Լուսաւորեալ Ազգերն այս միջոցով զարգացան, որ ցարդ անոր օգուտներն ալ կը վայելեն

Ձ. ԱՐԱՄԵԱՆ

կը ծախուի գրավաճառաց խանութները

Ի Դ Ի Ն

Նախնական Քրիստոնէական	30 սանդ.
Կրթական Քրիստոնէական	80 »

Կեդրոնատեղին է փարիզու դրատունը, Զադմադ Ճըլար.–Ցակոբեան խան Թիւ 13։

Դպրոցաց համար մեծ քանակութեամբ գնողներուն՝ հարիւրին 10 ղեղչ պիտի ըլլայ։

ՊԱՏՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Հայրենիք երեքշաբթի և՝ շաբաթ օրերը կը հրատարակուի։

Տարեկան բաժանորդագինն է մէկ հարիւրնոց թուղթ կանխիկ։

Վեցամսեայն մէկ յիսուննոց։

Եռամսեայն մէկ քսաննոց և տասնոց։

Միամսեայն մէկ տասնոց։

Փանուցման տողը երկու ղրուշ է։

Եմբագրութեան ուղղեալ նամակ կամ գիր ետ չը տրուիր։

Յրատրոյս վերաբերեալ ո և է գիր պէտք է ուղղել առ Տէր-Խմբագիր Մ. Յ. Մելիքեան Րիզա բաշա խան Թիւ 1։

ՏԷՐ-ԽՄԲԱԳԻՐ
Մ. Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ
Րիզա փաշա խան թիւ 3